ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

---

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Գործուղման են մեկնել ՀՀ ԱԽ քարտուղար Արմեն Գրիգորյանը, նրա խորհրդական Արշակ Մուսախանյանը, ինչպես նաև օգնականներ Ազատ Բաբայանը և Լուսինե Գրիգորյանը:

2. Գործուղման վայրը և ժամկետները.

ՀՀ ԱԽ քարտուղարի ղեկավարած պատվիրակությունը ս.թ. սեպտեմբերի 25 և 26-ին գտնվել է Բելգիայի մայրաքաղաք Բրյուսելում: Այնուհետև, ս.թ. սեպտեմբերի 27-28-ին պատվիրակությունը մեկնել է ԳԴՀ մայրաքաղաք Բեռլին:

3. Հրավիրող կողմը.

Բրյուսելյան հանդիպումների հրավիրող կողմը Եվրոպայի խորհրդի նախագահ Շարլ Միշելի գրասենյակն էր:

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Բրյուսել կատարած աշխատանքային այցի նպատակն էր ԵՄ, Ֆրանսիայի, Գերմանիայի գործընկերների միջնորդությամբ կազմակերպել ՀՀ-ԱՀ ներկայացուցիչների միջև հանդիպումը՝ պլանավորելու հոկտեմբերի 5-ին Գրանադայում նախատեսված ղեկավարների հնգակողմ բանակցությունները:

ԳԴՀ կատարած այցի նպատակն էր ներկայացնել ՀՀ-ում և ԼՂ-ում տիրող իրավիճակները, քննարկել երկկողմ օրակարգ:

5. Քննարկված թեմաները.

Բրյուսելում հանդիպմանը քննարկվել է ԼՂ-ում ստեղծված հումանիտար իրավիճակը, ինչպես նաև մի շարք հարցեր կապված ՀՀ-ԱՀ բանակցություններին: ԱՀ ղեկավարի օգնականի հետ համաձայնեցրել են Գրանադայի հանդիպման օրակարգը:

Սեպտեմբերի 27-28-ին Բեռլինում հանդիպումներին գործընկերների հետ ԱԽ քարտուղարը քննարկել է տարածաշրջանային անվտանգային իրավիճակը, անդրադարձել է Լեռնային Ղարաբաղում ստեղծված հումանիտար ծանր իրավիճակին և բռնի տեղահանվածների հիմնախնդրին: Հանդիպումների ընթացքում կողմերը նաև անդրադարձել են հայ-գերմանական երկկողմ հարաբերությունների զարգացման օրակարգին:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Բրյուսելում ԱԽ քարտուղարը հանդիպել է Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնի, Գերմանիայի կանցլեր Օլաֆ Շոլցի, ԵՄ խորհրդի նախագահ Շառլ Միշելի խորհրդականներին ու Ադրբեջանի նախագահի օգնականին՝ նախապատրաստելու հոկտեմբերի 5-ին Գրանադայում նախատեսված առաջնորդների հնարավոր հանդիպումը: ԱԽ քարտուղար հանդիպել է նաև Եվրոպական արտաքին գործողությունների ծառայությունում ընդհանուր անվտանգության և պաշտպանության քաղաքականության և ճգնաժամային արձագանքման հարցերով գլխավոր քարտուղարի տեղակալ Չարլզ Ֆրիզի հետ: Քննարկել են ԼՂ-ում ստեղծված հումանիտար իրավիճակը, անդրադարձել են տարածաշրջանային և արտատարածաշրջանային անվտանգային իրավիճակին ևս: Կողմերը քննարկել են նաև համագործակցության հնարավոր եզրերը՝ Անվտանգության և պաշտպանության ընդհանուր քաղաքականություն շրջանակներում:

Բեռլինում ԱԽ քարտուղարը հանդիպել է օրենսդիր և գործադիր մարմինների ներկայացուցիչների հետ: Քննարկվել են տարածաշրջանային անվտանգային իրավիճակը, անդրադարձ է կատարվել հայ-գերմանական երկկողմ հարաբերությունների զարգացման օրակարգին: ԱԽ քարտուղարը հանդիպել է նաև փորձագիտական համայնքի ներկայացուցիչների հետ:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Բրյուսելյան հանդիպումների ընթացքում հնարավոր է եղել համաձայնություն ձեռք բերել Գրանադայում նախատեսվող հնգակողմ հանդիպման օրակարգի շուրջ:

Բեռլինում ձեռք բերված պայմանավորվածությունները վերաբերում են երկկողմ հնարավոր համագործակցությունների ընդլայնմանը, մասնավորապես՝ անվտանգության և պաշտպանության ոլորտներում:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Բրյուսելյան հանդիպումների ընթացքում հնչած առաջարկությունները հիմնականում վերաբերում էին հոկտեմբեր 5-ին Գրանադայում նախատեսվող հնգակողմ հանդիպման պլանավորմանը:

Բեռլինյան հանդիպումների ընթացքում քննարկումները մասնավորապես կապված էին երկկողմ օրակարգի հետ, առաջարկներ են հնչել անվտանգության և պաշտպանության ընդհանուր քաղաքականություն շրջանակներում համագործակցելու վերաբերյալ, սակայն հստակ ժամկետներ չեն նշվել:

9. **Ստորագրությունը, ամսաթիվը.**

Արմեն Գրիգորյան, ՀՀ ԱԽ քարտուղար		03.10.23
Արշակ Մուսախանյան, ՀՀ ԱԽ քարտուղարի խորհրդական		03.10.23
Ազատ Բաբայան, ՀՀ ԱԽ քարտուղարի օգնական		03.10.23
Լուսինե Գրիգորյան, ՀՀ ԱԽ քարտուղարի օգնական		03.10.23